ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03

2023 ԹՎԱԿԱՆԻ «ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՆԵՐԱԶԴՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՇԵՐՏԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ) ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (այսուհետ՝ հանձնաժողով)

2023 թ. հունվարի 23-ին 10:00–ին կայացած նիստի

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Մասնակցում էին՝

Զարա Ասլանյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ (հանձնաժողովի անդամ)
Մարիանա Մինասյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Ռեգինա Առաքելյան		ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Նարեկ Առաքելյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Վերոնիկա Խորասանյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Օրակարգային հարցեր

1. Դրամաշնորհային մրցույթին դիմած հայտերի բացում

2. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում

Արթուր Մարտիրոսյանը հանձնաժողովի նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց օրակարգի հարցերը: Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի օրակարգը:

Կողմ 5, դեմ 0

1. **Օրակարգի 1-ին հարց**

Հանձնաժողովի կողմից հայտերի բացումը տեղի ունեցավ ս.թ. հունվարի 23-ին՝ ժամը 10.00-ին, www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով: Հանձնաժողովն արձանագրեց, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ԵՔ-ԴՄ-ՈՖ-02/23 ծածկագրով դրամաշնորհային մրցույթի ընթացակարգին հայտ է ներկայացրել յոթ կազմակերպություն.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների հասցեներ	Մասնակիցների էլ. հասցեները	Մասնակից-ների հեռախոսահամարներ	Մասնակիցների առաջարկած գինը /ՀՀ դրամ/
1	«Առավոտ» բարեգործական ՀԿ	ՀՀ , Լոռու մարզ, ք. Վանաձոր, Թատերական 8/1-4	aravott@yahoo.com	077 499077	3 962 000
2	«Բի էՍ ՍԻ» բիզնեսի աջակցման կենտրոն ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Եկմալյան 6, 2-րդ հարկ	samvel@bsc.am marketing@bsc.am development@bsc.am	077 574778 099 574778	3 633 696
3	Չարենցավանի երիտասարդական ուսանողական ՀԿ	ՀՀ Կոտայքի մարզ, ք.Չարենցավան 3-րդթաղամաս, 3-րդ շենք, 12 բնակարան	beglaryan.garnik@mail.ru	077 769595	1 319 000
4	«Ֆիլմ ինդաստրի դեվելոփմենտ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 17/2, բն. 18	lauratadevosyan1958@gmail.com guzhtadevosyan@gmail.com	094 189473 055 189475	3 999 600
5	«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Արգավանդի 2	tvandunts@gmail.com gorsu1967@gmail.com	093 280904 098 196720	3 985 080
6	«Մեղվիկ» ՀԿ	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Լազո 10	meghvikngo@gmail.com	0312 45196 094 832193	3 950 000
7	«Թրեյնինգս էՅ ԵՄ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Եկմալյան 6	marianna@quickstart.am info@trainings.am	055 221294 077 593959	1 973 318

Հանձնաժողովն ուսումնասիրեց ստացված հայտերի փաթեթների համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջվող փաստաթղթային փաթեթին և արձանագրեց, որ՝

«Առավոտ» բարեգործական ՀԿ հայտում՝

- բացակայում է դրամաշնորհային մրցույթի հրավերի «Մաս Ի»-ի 2.4 կետի 2) և 3) ենթակետերով պահանջվող՝ Ծրագրում ընդգրկվող աշխատակազմի յուրաքանչյուր անդամի գրավոր համաձայնությունը ծրագրում իր ներգրավվածության վերաբերյալ,

«Բի էՍ ՍԻ» բիզնեսի աջակցման կենտրոն ՍՊԸ հայտում՝

- ներկայացված լիազորագրում մրցույթի տեսակը սխալ է նշված,
- բացակայում է կանոնադրության պատճենը,

Չարենցավանի երիտասարդական ուսանողական ՀԿ հայտում՝

- բացակայում է դրամաշնորհային մրցույթի հրավերի «Մաս Ի»-ի 2.4 կետի 2) և 3) ենթակետերով պահանջվող՝ Ծրագրում ընդգրկվող աշխատակազմի յուրաքանչյուր անդամի գրավոր համաձայնությունը ծրագրում իր ներգրավվածության վերաբերյալ,

«Ֆիլմ ինդաստրի դեվելոփմենտ» ՍՊԸ հայտում՝

- դիմում հայտարարությունը և ֆինանսական նախահաշիվը ներկայացված չեն էլ. ստորագրությամբ՝ համաձայն հրավերի պահանջի,
- բացակայում է դրամաշնորհային մրցույթի հրավերի «Մաս Ի»-ի 2.4 կետի 2) և 3) ենթակետերով պահանջվող՝ Ծրագրում ընդգրկվող աշխատակազմի յուրաքանչյուր անդամի գրավոր համաձայնությունը ծրագրում իր ներգրավվածության վերաբերյալ,

«Մեղվիկ» ՀԿ հայտում՝

- դրամաշնորհային ծրագրի առաջարկը թերի է և չի պարունակում հրավերով պահանջվող ողջ տեղեկատվությունը,

«Թրեյնինգս էՅ ԵՄ» ՍՊԸ հայտում՝

- բացակայում է Ա. Գուրգենյանի փորձառությունը հավաստող փաստաթղթերը /ինքնակենսագրական, վկայականներ, հավաստագրեր/:

Օրակարգային 1-ին հարցի քննարկումից հետո Հանձնաժողովը որոշեց.

1. Առաջարկել «Առավոտ» բարեգործական ՀԿ-ին, «Բի էՍ ՍԻ» բիզնեսի աջակցման կենտրոն ՍՊԸ-ին, Չարենցավանի երիտասարդական ուսանողական ՀԿ-ին, «Ֆիլմ ինդաստրի դեվելոփմենտ» ՍՊԸ-ին, «Մեղվիկ» ՀԿ-ին և «Թրեյնինգս էՅ ԵՄ» ՍՊԸ-ին Հանձնաժողովի կողմից արձանագրված անճշտությունները շտկել և ներկայացնել մինչև հունվարի 27-ը՝ ժամը 18.00՝ ուղարկելով հայտերի լրամշակված տարբերակները Հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին veronika.khorasanyan@escs.am:

Կողմ 5, դեմ 0

2. Օրակարգային 2-րդ հարց

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը սահմանել 2023 թվականի փետրվարի 03-ը՝ ժամը 11:00, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 5-րդ հարկի դահլիճում՝ հասցե՝ Վազգեն Սարգսյան 3:

Կողմ 5, դեմ 0

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Մարիանա Մինասյան

Ռեգինա Առաքելյան

Նարեկ Առաքելյան

Վերոնիկա Խորասանյան